600.0262.05.08.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 օգոստոսի 2020 թվականի №262Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի №101Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, և հաշվի առնելով «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի հուլիսի 1-ի և 30-ի դիմումները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 23-ի «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Վայոց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №101Ա որոշման՝
   1) 1-ին կետում «Հորբատեղ և Արտաբույնք համայնքների վարչական տարածքներում» բառերը փոխարինել «Եղեգիս համայնքի վարչական տարածքում (գյուղ Հորբատեղ և գյուղ Արտաբույնք)» բառերով.
   2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 9-րդ կետում «առավելագույն թույլատրելի աշխատանքային հզորությունը 1300 կՎտ է, փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 3050 կՎտ» բառերը փոխարինել «փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 3050 կՎտ է» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՈՒՐԲ ԱՂԲՅՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
5 օգոստոսի 2020թ.